ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 13

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

(Периодический сборник научных статей)

№ 13

Ереван
Издательство ЕГУ
2017

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES

JOURNAL OF ORIENTAL STUDIES
(scholarly periodical journal)

№ 13

YEREVAN
YSU PRESS
2017

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելիքյան Գուրգեն բ. գ. թ., պրոֆեսոր *(նախագահ),* Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., դոցենտ , Կարապետյան Ռուբեն պ.գ.դ., Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր, Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ, Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ, Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր, Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր, Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ, Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան), Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.թ., Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան), Էքմեքչյան Լեռնա PhD (ԱՄՆ), Գրեկյան Երվանդ պ.գ.դ., Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա), Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ, պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2017

Ղազարյան Վահե

ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանալի բառեր՝ *Ապրիլյան քառօրյա պատերազմ, Արցախ, տեղեկատվություն, լուսաբանում, անվտանգություն, հանրային կարծիք, հակամարտություն, պատմություն, առանձնահատկություն, ադրբեջանական կեղծիք, պատրաստվածություն, միջազգային կանոններ*

Ռազմական գործողությունների լուսաբանման կարևորության և յուրահատկությունների մասին բազմաթիվ ուսումնասիրություններ են կատարվել: Բացի տեղեկատվական պատերազմների, ռազմական ու մարտական գործողությունների ժամանակ լրատվամիջոցների դերի և այլ «ներոլորտային» քննություններից ու ուսումնասիրություններից՝ կան նաև կոնցեպտուալ նոր մոտեցումներ, ըստ որոնց՝ տեղեկատվությունն ու լրատվությունը 21-րդ դարում ձեռք են բերել բոլորովին նոր որակի նշանակություն: Օրինակ՝ ժամանակակից փիլիսոփա Էլվին Թոֆլերը, ով ագրարային ժամանակաշրջանի համար պատերազմի նպատակ է համարում հողը, իսկ ինդուստրիալ ժամանակաշրջանի համար՝ արտադրության միջոցները, պնդում է, որ տեղեկատվության դարաշրջանում պատերազմն ընթանում է տեղեկատվության և գիտելիքի ստեղծման ու վերամշակման գործիքների համար: Բացի դրանից՝ Թոֆլերը նշում է, որ Երկրորդ համաշխարհայինից մնացած՝ տեղեկատվության հավաքման փակ համակարգերը հնացել են, քանի որ նրանց կողքին կան բաց համակարգեր, որոնց միջոցով առանց լրտեսական ցանցերի և

հատուկ ջանքերի կարելի է ռազմական առումով կարևոր տեղեկատվություն ստանալ[1]: Սա նշանակում է, որ պատերազմական իրավիճակում գտնվող պետության ներքին և արտաքին լրատվությունը կարող է վերածվել ռազմական գաղտնիքի բացահայտմանը, առավել ևս՝ բուն ռազմական գործողությունների ընթացքում:

Մյուս կողմից՝ այսօր ավելի ու ավելի հաճախ է հնչում այն տեսակետը, որ տեղեկատվական պատերազմն ու ռազմական գործողությունների լուսաբանումն ավելի կարևոր են, քան բուն ռազմական գործողությունները[2], քանի որ նրանց միջոցով է ձևավորվում հասարակական կարծիքը, իսկ հասարակական բացասական կարծիքն ուղղակիորեն կարող է հանգեցնել ռազմական գործողությունների ձախողման: Որպես ասվածի լավագույն օրինակ՝ բերվում է 1992 թ. դեկտեմբերին Սոմալիում ամերիկյան դեսանտի իջեցումը, որից առաջ լրատվամիջոցների ներկայացուցիչներն էին տեղակայվել իջեցման վայրում՝ հնարավորինս արդյունավետ լուսաբանման համար, թեև դա վտանգավոր էր լրագրողների համար:

Այս համատեքստում Ապրիլյան քառօրյա պատերազմի հատկապես հեռուստատեսային լուսաբանումը օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով թերի էր, թեև ակնհայտ է, որ հեռուստատեսային անդրադարձը հասարակական կարծիքի ձևավորման գործում ամենից վճռորոշ նշանակությունն ունի:

Ապրիլյան քառօրյա պատերազմի լուսաբանման առաջին խնդիրը կապված էր լրագրողների անվտանգության հետ: Քառօրյա պատերազմի վերաբերյալ հրապարակումներում այս խնդիրն արդեն քննարկվել է: Առցանց «Առավոտի» խմբագիր Աննա

[1] Տե՛ս Тоффлер Э., Тоффлер Х., Война и антивойна, М., 2005, стр. 240.
[2] Տե՛ս Judit O., Вооруженные конфликты и СМИ, стр. 354, http://hadmernok.hu/2009_2_oszti.pdf.

Իսրայելյանն այս մասին անդրադարձել է իր «Պատերազմը խախտում է լրագրողական էթիկական բոլոր սկզբունքները» հոդվածում[3]՝ գրելով, որ պատերազմի սկզբին Արցախում պատահականորեն հայտնված իրենց լրագրողին չի կարողացել հրահանգել մնալ ռազմական գործողությունների տարածքում, քանի որ չի պատկերացրել, թե ինչպես պետք է նայի այդ լրագրողի հարազատների աչքերին, եթե լրագրողի հետ ինչ-որ բան պատահի: Նմանատիպ իրավիճակում է հայտնվել նաև ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, ով 2016 թ. ապրիլի 1-ին գտնվում էր Արցախում. զինվորականության հորդորով ֆոտոլրագրողը վերադարձել է Երևան: Պատճառն այն է, որ ադրբեջանական հարձակման առաջին փուլում զինվորականները, չհասկանալով, թե ինչպես պետք է աշխատեն լրագրողները, վերջիններիս հորդորել են հեռանալ Արցախից: Սակայն եթե զինվորականության նման որոշումը տրամաբանական է, ապա լրագրողների ինքնակամ հեռացման փաստը վկայում է գիտելիքի և փորձի այն բացի մասին, որ առկա է լրագրության ոլորտում: «Հետք» էլեկտրոնային թերթի գլխավոր խմբագիր Էդիկ Բաղդասարյանը Քառօրյա պատերազմի վերաբերյալ իր ամփոփումներից մեկում, ընդգծելով, որ 90-ականների ռազմական գործողությունների համեմատ շատ բան է փոխվել, նշում է, որ Ապրիլյան պատերազմի առաջին օրերին ռազմաճակատում աշխատելը շատ ավելի հեշտ էր, քանի որ շատ լրագրողներ չկային, սակայն իրավիճակը փոխվեց հրադադարի հաստատումից հետո, երբ լրագրողների թիվն առաջին գծում կտրուկ աճեց[4]:

[3] Տե՛ս https://media.am/media-ethics-during-war-time:
[4] Տե՛ս https://media.am/Edik-Baghdasaryan-on-the-scene:

Սակայն լրագրողների անվտանգության խնդիրը նաև արցախա-ադրբեջանական հակամարտության առանձնահատկությունների և մասնավորապես բացարձակ անտագոնիզմի ամենից կարևոր ցուցիչներից է: 1949 թ. ստորագրված Ժնևի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության 79-րդ հոդվածը[5] սահմանում է հակամարտությունների գոտում աշխատող լրագրողների իրավունքները: Սակայն Արցախում տեղի ունեցող իրադարձությունները չեն համապատասխանում միջազգային կոնվենցիաներին: BBC-ի լրագրող Ջերեմի Բոուենը հիշում է, որ 1989 թ. ինքը Սալվադորում ընթացող թեժ մարտերի միջով անցնում էր՝ միայն սպիտակ դրոշակ թափահարելով, առանց զրահաբաճկոնի և հատուկ մասնագետի ուղեկցության, և դժգոհում է, որ այժմ առանց հատուկ միջոցների՝ հնարավոր չէ[6]: BBC-ի արաբական ծառայության լիդ տնօրեն (Lead Director) Էդմոնդ Սաբելլան Media.am-ի խնդրանքով մի քանի խորհուրդներ է առանձնացրել ռազմական բախումների գոտում աշխատող լրագրողների համար. «Անհրաժեշտ սարքավորումներ՝ առաջին անհրաժեշտության իրերով պայուսակ, սեփական անվտանգությունն ապահովող իրեր (զրահաբաճկոն, սաղավարտ, ակնոց և դիմակ), առօրյա հագուստ, առաջին բուժօգնության պարագաների դեղարկղ, կապի միջոցներ»[7]: Գրեթե նույն պատկերն ենք տեսնում «Լրագրության անվտանգության միջազգային կանոններում»[8]: Գուցե արևմտյան լրագրության համար անընկալելի լինեն այն վտանգները, որոնք սպառնում են հայ լրագրողին: Հետևաբար, արևմտյան լրագրության տեսաբանների կողմից մշակված անվտանգության այն կանոնները, որոնք կիրառելի են գրեթե ամբողջ աշխարհում, կիրառելի չեն Արցախում,

[5] Տե՛ս http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=81055:
[6] Տե՛ս http://www.bbc.com/russian/russia/2015/02/150220_reporters_duty_of_care:
[7] https://media.am/Travel-Safety-and-Hostile-Environments-Tips:
[8] Տե՛ս Կառավարել ռիսկերը, Ե., 2012, էջ 144:

իսկ դա նշանակում է, որ հայ լրագրողները պետք է գուցե նաև ռազմական որոշակի պատրաստվածություն անցնեն, որպեսզի անհրաժեշտ պահին հասկանան իրական վտանգները և դրանց դիմակայելու ելքերը: Բացի գործնական աշխատանքից՝ անհրաժեշտ են նաև ձեռնարկներ՝ ամբողջական լուծումներով (տեղաշարժման կանոններ, առաջին բուժօգնություն, կապի միջոցների օգտագործում ևն):

2016 թ. ապրիլի 5-ից՝ հրադադարի հաստատման մասին հայտարարությունից հետո Արցախում հայտնվեցին մեծ թվով լրագրողներ և օպերատորներ: Եթե մինչ այդ տեղեկատվության միակ վստահելի աղբյուրը Ստեփանակերտում գործող պաշտոնական մեդիա-կենտրոնն էր, ապա ապրիլի 5-ից իրավիճակը փոխվեց: Մեծ թվով հայ և արտասահմանցի լրագրողների, օպերատորների և լուսանկարիչների ժամանումը՝ Արցախ և ընդհուպ ռազմական գործողությունների գոտի, տեղեկատվական նոր լիցք հաղորդեց հայաստանյան և միջազգային լրատվամիջոցներին՝ ճիշտ ժամանակին հերքելով ադրբեջանական քարոզչության տարածած ստերը: Ահա այստեղ է ձևակերպվում ընդհանրապես Արցախյան պատերազմի լուսաբանման մի շատ կարևոր առանձնահատկություն: Բազմիցս խոսվում է ռազմական գործողություններից բացի նաև ընթացող տեղեկատվական պատերազմի մասին: Ամբողջ աշխարհում սա չափազանց կարևոր գործոն է, քանի որ նրա միջոցով ոչ միայն կարելի է հանրային կարծիք ձևավորել, այլև խուճապ ու կազմալուծում տարածել հակառակորդի շարքերում: Արցախա-ադրբեջանական հակամարտության կարևոր առանձնահատկություններից է այն, որ հիմնականում ադրբեջանական քարոզչությունը հիմնվում է ստի և կեղծիքի վրա: Օրինակ՝ Ապրիլյան պատերազմի առաջին իսկ

օրերից ադրբեջանական մամուլը սկսեց լուրեր տարածել հայկական տարբեր բնակավայրերի գրավման վերաբերյալ[9]: Նույնիսկ լուսանկարներ ու տեսանյութեր հրապարակվեցին, թե ինչպես են տեղադրվում բնակավայրերի ադրբեջանական անունների նոր ցուցանակները: Այդ բնակավայրերի մեջ առաջին տեղում Թալիշ գյուղն էր: Եվ բավական էր այցելել Թալիշ, լուսանկարել և տեսանկարել բնակավայրը, որպեսզի ադրբեջանական քարոզչությունը ոչ միայն չեզոքացվի, այլև հայտնվի ծիծաղելի վիճակում:

Ապրիլին ռազմաճակատ մեկնած լրագրողները կանգնեցին մի փաստի առջև. որտե՞ղ է ավարտվում բաց տեղեկատվությունը, և սկսվում ռազմական գաղտնիքը:

Արցախյան պատերազմի մասին հարյուրավոր հոդվածներ և մեկ գիրք գրած, փորձառու լրագրող Թաթուլ Հակոբյանը խոստովանում է, որ նույնիսկ ինքը վրիպումներ է թույլ տվել Ապրիլյան պատերազմի օրերին. «Մենք՝ լրագրողներս, հատկապես օրաթերթում աշխատող, միշտ էլ սխալվելու իրավունք ունենք. ամենօրյա աշխատանքը ենթադրում է, որ դու չես կարող սխալներից զերծ մնալ, բայց կարևոր է, երբ լրագրողը դա հատուկ չի անում, իր գործունեության ընթացքում տալիս է այն, ինչ եղել է՝ առանց հնարելու, ավելացնելու»[10]: Սակայն սա միայն առանձին լրագրողի գիտելիքի, փորձի կամ կողմնորոշվելու խնդիր չէ: Այստեղ գործ ունենք շատ ավելի համակարգային խնդրի հետ: Մի կողմից՝ ակնհայտ է, որ Արցախյան հակամարտության լուսաբանման համար չկա ընդհանուր տերմինաբանություն: Այսինքն՝ նույնիսկ եթե մի կողմ թողնենք միջազգային հարաբերությունների

[9] Ադրբեջանական քարոզչության այլ ձախողումների ու դրանց պատճառների մասին է տեղեկատվական անվտանգության փորձագետ Սամվել Մարտիրոսյանի ելույթը, տե՛ս http://noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=14592:
[10]http://araratnews.am/paterazmeh-mez%D5%9D-lragroghneris-cuyc-tvec%D5%9D-chpetkh-e-xusaphenkh-banakeh-khnnadateluc-thathul-hakobyan/:

տերմինաբանությունը, ինչպես նաև այն, որ տարբեր քաղաքական ուժեր, իրենց շահերով ու աշխարհընկալումներով առաջնորդվելով, կիրառության մեջ են դնում հակոտնյա տրամաբանություններով եզրույթներ, Արցախյան հակամարտության լուսաբանման տիրույթում առկա է տերմինաբանական մի խառնաշփոթ: Ավելին՝ որոշակի հակասություններ և անհամապատասխանություններ կան նաև Արցախյան հակամարտության պատմությունը ներկայացնող հայ հեղինակների գրքերի[11] և նույնիսկ պաշտպանական գերատեսչությունների պաշտոնական ժամանակագրությունների[12] միջև: Սրան եթե հավելենք այն, որ թեև մեծ ռեսուրսներ և ուշադրություն է դարձվում «Վիկիպեդիա» առցանց հանրագիտարանի հայկական բաժնին, այդուհանդերձ, հնարավոր է՝ որոշակի սադրանք բաց հասանելիությամբ հանրագիտարանի հանդեպ, ապա ռիսկերի պատկերն ավելի ամբողջական կդառնա: Նույնիսկ համաշխարհային հռչակ ունեցող լրատվամիջոցներում են տեղի ունեցել սկանդալային պատմություններ՝ «Վիկիպեդիայում» հրապարակված սուտ տեղեկությունների հետ կապված[13]: Հետևաբար, որքան էլ լրագրողը փորձի լավ աշխատել, մեծ հաշվով, միշտ էլ սխալվելու է, քանի որ միասնական տերմինաբանության և պատմության պարբերացման շատ լուրջ խնդիր կա: Այն կարելի է լուծել՝ մեկ միասնական առցանց շտեմարան ստեղծելով: Ավելին՝ պատերազմական

[11] Տե՛ս Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994 հանրագիտարան, Ե., 2004, 864 էջ, Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Ե., 1997, 852 էջ, Հակոբյան Թ., Կանաչ ու սև. արցախյան օրագիր, Ե.-Ստ., 2011, 520 էջ, ևն:
[12] Տե՛ս http://www.mil.am/hy/68/71/287, http://www.mil.am/hy/68/71/288, http://www.nkr.am/hy/the-war-of-19911994/83/:
[13] Տե՛ս Գիլմոր Դ., Մեդիակտիվ, Ե., 2015, էջ 46, ինչպես նաև Նեյլոր Գ., Փախստականների, տեղահանված անձանց և ազգային փոքրամասնությունների խնդիրների լուսաբանման առանձնահատկությունները, Սոցիալական խնդիրների ժուռնալիստիկա, Ե., 2013, էջ 32:

գործողությունների վերսկսման ժամանակ ստեղծվող մամուլի կենտրոնը ևս կարող է ունենալ առցանց տարբերակ՝ չլինելով բաց հասանելիությամբ, այլ ունենալով ԶԼՄ-ների առցանց հավատարմագրում: Դրանով ոչ միայն կապահովվի շատ ավելի մեծ թվով ԶԼՄ-ների արձագանքը, այլև հնարավոր կլինի տարածել այնպիսի լուսանկարներ, տեսանյութեր, որոնք ռազմական գաղտնիք չեն պարունակում:

Հայաստանի պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար, ռազմական փորձագետ Արծրուն Հովհաննիսյանը Ապրիլյան քառօրյա պատերազմի կարևոր առանձնահատկություն է նշում, որը վերաբերում է հենց տեղեկատվության տարածմանը: Ըստ Ա.Հովհաննիսյանի դիտարկման՝ ադրբեջանական լրատվամիջոցները մինչև կեսօր լռում էին, ինչից հետո սկսվեց տեղեկատվական տեղատարափը, ընդ որում, սկզբում անթաքույց հպարտությամբ, որ իրենք հարձակվել են և գրավել ինչ-որ բնակավայրեր ու բնագծեր: «Սա նշանակում է, որ տեղեկատվական գործողությունները ևս նախօրոք պլանավորված են եղել՝ մարտական գործողություններին համահունչ սցենարով: Ադրբեջանական զորքերի հաջողությունները պետք է ուղեկցվեին համապատասխան տեղեկատվությամբ, սակայն երբ դրանք սկսեցին հաղորդվել ըստ նախնական մշակված պլանի, չէին համընկնում մարտական գործողություններին: Ի դեպ, նույնը արեց նաև թուրքական մամուլը, որը ևս հավանաբար տեղյակ էր ծավալվելիք գործողությունների մանրամասներին»[14],- եզրակացնում է Ա.Հովհաննիսյանը:

Ասվածից երևում է, որ ադրբեջանական քարոզչությունը հայկական կողմում խուճապ տարածելու խնդիր է ունեցել: Համացանցի այժմյան հասանելիության պայմաններում, ըստ

[14] https://news.am/arm/news/322349.html:

էության, մեկ ճանապարհ կա. քանի որ այդ տեղեկատվությանը չանդրադառնալը կամ կապի ու հեռահաղորդակցության հնարավորությունների սահմանափակումը միանշանակ հանգեցնելու են հասարակական խուճապի, միակ ճանապարհը տեղեկատվության մեկնաբանությունն է կամ հերքումը, իսկ դա կարող է անել միայն պատրաստված լրագրողը՝ ռազմական պատասխանատուների օգնությամբ:

Резюме

Четырехдневная апрельская война показала, что армянская журналистика не полностью готова к освещению боевых и военных операций. В статье рассматриваются особенности освещения апрельской войны 2016 года, отмечается, что помимо того, что освещение Арцахского конфликта по многим аспектам не соответствует международным правилам, существуют также существенные различия между способами освещения военных и боевых действий 1990 года и апрельских событий 2016г. Данная статья содержит решения некоторых проблем освещения Арцахского конфликта.

Summary

The April 2016 four-day war showed that Armenian journalism is not entirely ready to cover military operations. Current article presents the features of the coverage of the that wars. It notes that in addition to the fact that the coverage of the Artsakh conflict does not correspond to various aspect of international rules, there are also significant differences in covering the hostilities in 1990s and April war in 2016. The article provides solutions to some problems of coverage of the Artsakh conflict.